

երկասիրութիւն թողուց իւրաքանչիւրը: Միտ-
թարայ անունն իւր արդիւնքներովը ծանօթ է,
ծանօթացաւ. նաեւ Գաւիթ, յարորդ յօգուածով
մը պիտի ծանօթացնեն զվարդան Վ. Հաղ-
բատացի, բայց անշայտ պիտի մնան Պետրոս եւ
Իգնատիոս:

Հ. Ն. ԱՅԻՆՆԱՆ.



ՊԱՅՄԱՆԱՆ

ԸՌԴՅՈՒՆ ԻՌԻՍՏՈՍԻՔ ԵՒ ՍՐՈՒՄԷ

Ա. Սղւնատար Բ. ի արշաւանք Արմէի գէմ:

Ուրարտու առաջին անգամ հանդէս է
դալին պատմութեան մէջ Սաղմանասար Բ. ի
ժամանակ (860—825 Ն. Ք.) միանգամից
իրեն հզօր տէրութիւն, որի գէմ ասորեստանի
թագաւորը կարեւոր համարեց իւր կառավա-
րութեան նոյն իսկ առաջին տարին ուղղել իւր
զենքը՝ հիւսիսից սպառնացող վտանգի առաջն
տանելու համար: Ուրարտացի Արամէն, ամրա-
նալով անառիկ լեռներում, խրոխտացաւ մի
բուռն անպաճառ, կիսամերկ լեռնականներով
արիւմար դիմարդել ասորեստանցոց քաջ վե-
նուած եւ վարժուած հարուստ գրոհակներին:
Առաջին անգամ Բաբելոնի աշխարհակալները
մտան մի հեռուոր երկիր, ուր Ասորեագիրքալ
(885—860 Ն. Ք.), Սաղմանասար Բ. ի հայրը,
չվտահագաւ արշաւել, թէեւ նա սրով եւ
հրով անցաւ Ուրմիոյ ծովի շրջակայ Նաիրի
իշխանութիւնները եւ Սուպնատ գետի (Սեբե-
նեհ-սու) ափերէից մինչեւ Ուրարտուի սահ-
մանները նուաճեց¹: Առաւել նշանաւոր էր Տիգ-
րատպալասար Ա. ի մօտ 1110 թ. Ն. Ք. ձեռ-
նարկած արշաւանքը Վանայ ծովի շուրջը եւ
նորա մօտերը ապրող «Նաիրի» կոչուած մանր
ցեղերի գէմ, որոնց 23 նիգլակայից իշխանների
եւ նոցա օգնութեան եկած 60 այլ ցեղապետ-
ների միացեալ զօրքը նա՝ անցնելով Եփրատը՝
չարգեց եւ հալածեց գէպի «Վերին ծովը»,
Ընդհարումը տեղի է ունեցել յայնչոյս Եփրատ
գետի, ըստ երեւութի՝ Մուշից հիւսիս կամ
հիւսիս-արեւմուտք, Սուխմէ եւ Դալանների իշ-

խանութեանց սահմաններում, հետեւաբար
այստեղ յիշուած «Վերին ծովը», տակ հասկա-
նալու է բնիկներաց ծովը, Քսաներեց Նաիրի
իշխանութեանց թուում չէ յիշուում Ուրարտու,
որ կամ բնաւ գոյութիւն չունէր այն ժամանակ
եւ կամ պատերազմի տեղից շատ հեռի կը գտա-
նուէր: Ասորեագիրքալի ժամանակ ուրարտացի
Արամէն կը տիրէր արգէն Նաիրի երկրների մի
մասին, սպառնալով Ասորեստանին: Վտանգը
մեծ էր, քանի որ բնիկ ցեղերը, ասորեստանի
թագաւորներից քանից շարաշար բռնադա-
տուած, հակուած էին մանչև Ուրարտուի հզօր
թեւերի տակ: Արամէի այս ծրագիրը՝ ձուլել
Նաիրի իշխանութիւնները ընդհանուր թշնա-
մու գէմ՝ կարողացաւ սակայն ամրողւովն իրա-
գործել միայն Ռուսա Ա.:

Հազիւ գահ բարձրացած 860 թ. Սաղ-
մանասար Բ. առանց ժամանակ կորցնելու նոյն
իսկ թուին արշաւեց Արամէի գէմ: Մտնելով
նախ Սիմսի նեղանցքը նա նուաճեց նոյնանուն
երկիրը եւ ընդունեց հարկ խարգաւ, խարմասա,
Սիմսի, Սիմիր, Սիրիշ եւ Ռւման երկրներից՝
(ձիեր, լծի պարագաներ, եղներ, ոչխարներ եւ
գլխի): Ապա ձգելով բարձր լեռնային շղթան
նա մօտեցաւ խառնուշէի եւ քաղաքին:

«Ես այրեցի խուրուշէիս նորա գաւառի
100 քաղաքներով հանգերձ. Վակիա, Նաիրիի
թագաւորը, եւ նորա միացեալ զօրքը ահաբեկ
եղան իմ զենքի սարսափից եւ գրուեցին մեծ
լեռները: Ես նոցա ետեւից բարձրացայ լեռները
եւ պատերազմեցայ լեռների մէջ օստապալէս,
չարգեցի նոցա: Ես տարայ լեռներից ռազմիկ
կառքեր, զինուորներ, ձիեր, լծի պարագաներ:
Ասորի, իմ տիրոջ, մեծութեան սարսափը նոցա
պատեց. նոքա վայր իշան, փաթմաթուեցան իմ
ոտերիս: Ես հարկ եւ տուրք դրի նոցա վերայ:

Խուրուշէիայից ես չուեցի, մօտեցայ ու-
րարտացի Արամէի ամրոցաքաղաք Սուգու-
նիաին. Ես յարձակեցայ քաղաքի վերայ,
նուաճեցի. ես կտորեցի նոցա ռազմիկներից
շատերին, նոցա աւարը տարայ, նորա քաղաքի
հանգէպ կանգնեցրի կառափներից մի սին.
Նորա երկրի 14 քաղաքները հրով այրեցի:

Սուգուշիայից չուեցի, ինչպէս Նաիրի ծովը,
զենքս թաթախեցի ծովի մէջ, իմ աստուծոց
զոհ մատուցի: Նոյն իսկ ժամանակ պարաստեցի
իմ անձին պատկերը, գրեցի նորա վերայ Ասուրի՝

¹ Այս կորատու անգլիկութեան մէջ առաջին ան-
գամ յիշուած է Ուրարտու երկիրը՝ «Սուպնատ գետի
ափերէից մինչեւ Ուրարտու երկիրը նուաճեց նորա
ձեռքը» (A. Layard, Inscriptions in the cuneiform
character from assyrian monuments, 1, 94)

² Յիշուել երկրները կը ձգուէին Նոյի տանակից
գէպի Ռափանիդ եւ Հերոսանի հովիտը:

իմ պայծառափայլ տիրոջ՝ վեհօթինը եւ իմ զօրութիւնը եւ կանգնեցրի այն ծովէ ափին¹։

Սաղմանասար Բ. ի այս առաջին արշաւանքը հազիւ թէ կարելի է աջող համարել. նախ քան Սրամէի երկիրը մտնելը նա հանդիպեցաւ Նաիրի թագաւոր Ասկիաի ուժգին դիմադրութեանը, որին աջողեցաւ արհեստհեղ ճակատից յետոյ փախստեամբ ապրել, թողնելով իւր բանակը, գոնէ Սաղմանասար նորա գերութեան մասին չէ յիշում, որի Սրամէի հետ կապած բարեկամութեան դաշն նա երեք տարի յետ կրկին զենքի զօրութեամբ քակել փորձեց, խուճուճ կիս երկիրը իւր համանուն մայրաքաղաքով հանդերձ պէտք է գտանուէր ուրարտեան հաւաքային սահմաններին անմիջապէս կից, մեծ կամ վերին Զար գետի մօտերը, Զախու — Ամարի — Ռիգանի մէջ։ Այստեղից Սաղմանասար ուղղակի մտաւ Ուրարտու եւ յարձակմամբ առաւ Սուգունիս բերդը. սակայն Սրամէի հետ ընդհարում չունեցաւ, որովհետեւ վերջինս՝ խոյս տալով նորա հետ տափարակում ճակատիլ՝ ամրացել էր անառիկ լեռներում։ Առաւ արդ եղանակը միանգամայն յատուկ է լեռնաքանդներին, որի շնորհիւ երկրի հետ անձանթ թշնամին ստիպուած է լինում՝ առանց մահացու հարուած հասուցանել կարողանալու ընկնելին՝ բաւականաչափ աւարառութեամբ եւ հրկիզութեամբ։ Սաղմանասար չէ յիշում գերիների եւ հարուստ աւարի մասին, եւ այս հանգամանքն ստիպել է տալիս կարծել, որ Սուգունիսի եւ այլ 14 “քաղաքների” (իմա շրջակայ գիւղերի) ընտելիք նախապէս իրանց ինչքով ապաստանել էին լեռներում։

Սուգունիսի, ինչպէս եւ առհասարակ այլուոր հնութեան այլ քաղաքների դիրքը, որոնց յիշատակը ժամանակը ջնջել է, գտարին է այժմ անսխալ որոշել. յամենայն դէպս նա պէտք է գտնուի եր վաղայն ծովից հարաւ կամ՝ հաւանորեն՝ հարաւ — արեւմուտք, ուր կը տարածուէին Ուրարտուի սահմանները, Մոկսի, Բիթլիսի եւ հիւսիսային Բոհանի մէջ, թերեւս խալդի-գաղի մօտ, Տիգրիսի թեւերից մէկի վերայ²։ Անպատակ համարելով հետամուտ լինել

արագաշարժ Սրամէին լեռնային խորշերում, Սաղմանասար իշաւ Սուգունիսից (երեւի Բոհանանի գաղափարի վերայով)։ Անթամարայ ծովը, ուր նա իւր գործող յիշատակը ապառաժի վերայ փորագրել տուեց։

Սաղման արշաւանքը ապացուցեց, որ հիւսիսում իշխող թշնամու հետ պատերազմը կը պահանջէր աւելի մեծ եռանդ եւ պատրաստութիւն. Սրամէի յփերը ջլատելու համար կարելու էր նորա հարուածել նորա բուն երկրի մէջ, մինչգետ Սուգունիս սահմանաբերդ էր հանդիսանում։ Երեք տարուց յետոյ Սաղմանասար կրկնեց իւր արշաւանքը, այս անգամ լայն ծրագրով. 857 թ. նա չուեց Նինուէից, անցաւ Տիգրիս գետը, դիմելով հիւսիս — արեւմուտք, իւր յետեւ թողնելով խաւով եւ դիմելով գաւառները, Նուաճեց Տիլ-Բարսիպ ամրոցը, որտեղից նա ապա մտաւ Բիտ — Զաման երկիրը, անցաւ համգան եւ Միրսիս գաւառները եւ՝ կտրիւղ բարձրագագաթ լեռնաշղթան՝ իշաւ Իշուա երկրի Հան ձիթ (Inziti) գաւառը. “Հան ձիթ գաւառը ամրոցը նորա ծաւալով նուաճեց իմ ձեռք, նորա քաղաքները եւ ասպատակեցի, աւերեցի եւ հրով այրեցի”, կանխեցնելով Սաղմանի սեղանը իւր պատերերը, որի վերայ նա յիշատակել տուեց իւր յաղթական գործքերը, Սաղմանասար ելաւ Հան ձիթից, անցաւ Արա — Ծանի գետը (երեւի Բալուի կամ Խարպուտի մօտ) եւ նուաճեց Սուխմի գաւառը նորա Ուշտաւ ամրոցը հանդերձ, որի Սուս անունով տիրող նա գերեց։

Սուխմից եւ չուեցի եւ ինչպէս այս անհիւրէրէր. Դայաննի նորա ամրոցը ծաւալով նուաճեցի, քաղաքները ասպատակեցի, աւերեցի, հրով այրեցի. նոցա հարուստ աւարը, ինչքը եւ գոյքը առայ, Դայաննից չուեցի եւ մօտեցայ Արգաշ ձիթ, ուրարտացի Արամուի արքային տալով քաղաքին։ Ուրարտացի Արամու

Համառութեամբ զօրութիւն ընձայելու համար՝ սակայն պէտք է թողլ տալ երկարել, որ Պաղպղուս Սագանան քաղաքը իցէ սխալմամբ Արամուից հիւսիս է գտնուել փոխանակ նարանից հարաւ (Սասուի մօտերը) նորա յիշուելու. որ այս կերպ մոտմոտ կը համապատասխանէր ուրարտեան Սուգունիսի աշխարհագրական դիրքին և Միսի կողմից ինչ առաւել հաւանական կը թուի երկարաւորել, որ Պաղպղուսը Տավանայա Հաւանից գաւառում իւր անուն մէջ կ'արտափայլեցնէ ուրարտեան Suxmo, այլ խորագրութեամբ՝ Suxne (Սուխնէ) գաւառի անուն յիշատակը, որին նա ըստ իւր աշխարհագրական դիրքի միանգամայն կը համապատասխանէ։ Սաղմանասար յիշում է եւ գաւառի գլխաւոր քաղաքը Ուշտաւ — ալ (ուշ, — ալ), ի՞նչ ըստ ուրարտեան լեզուի “տողի” հմուտ. Արամուի, որի հետ թերեւս կապելու է մեր Նախնեաց Հայրենայն գաւառի մութ անունը։

¹ Mon. Inscript. Rawl. III 7—8. Արամուսարութիւնս գտնուած է Վարդուս, Ափրից (Դիար-բեկից) հարաւ, Տիգրիսի աջ ափին։

² Պաղպղուսի յիշած Արամանի աջ ափին, Հաւանից գաւառում, Տավանայա — Սագանան (Tab. Ptol. Saguana) անդռի անուն մէջ թերեւս պահպանուած է ուրարտեան ընդդաշնադրի կոմանտ խուլ արձագանքը (Claudii Ptolemaei Geographica, C. Müller, Paris)։

ասհարեկ եղաւ իմ ասհեղ զէնքի սարսափից եւ իմ ուժգին պատերազմից եւ թողնց իւր քաղաքը, եւ բարձրացաւ Ա գ Գ ու ռ ի մէջ. 3400 ռազմիկներ զէնքով գետին տապալեցին. ինչպէս Ռամման¹ հեղեղ տեղալ տուի նոցա վերայ, նոցա արինով ներկեցի (լեռները) իբրեւ բուրդ, նորա բանակը եւ ասայ, նորա կառքերը, հեծեալները, ձիերը, առանակները, արբոսները, ինքը, աւարը եւ հարուստ գոյքը եւ տարայ լեռներից: Արամով² իւր կհանքը փրկելու համար՝ բարձրացել էր մի անտիկ լեռան վերայ, իմ առեական զօրութեամբ վայրէ ցուլի պէս ռանակոխ արի նորա երկիրը, փխտակ զարձուցի նորա քաղաքները: Արգաշկու նորա շրջակայ քաղաքներով հանդերձ ասպատակեցին, աւերեցին, հրով այրեցին. նորա քաղաքագլուհ հանդէպ կանգնեցրի կառափներից մի սին, ոմանց ողջադամ կանխ տուի սինից, իսկ ոմանց սեան շուրջը ձողերի վերայ շամբիւրից:

Արգաշկուից չուեցի [բարձրացայ Իրիտիա իմ լեռը, թագաւորութեանս մի հոյակապ պատկեր շինեցի, վերան գրեցի Ասուրի, իմ սիրով, վեհութիւնը եւ իմ ասհեղ զօրութիւնը, որ եւ Ուրարտուի մէջ զօրագործեցի, կանգնեցրի (այն) իրիտիա լեռան վերայ: Իրիտիայից չուեցի, մտեցայ Արամ լիւն. նորա շրջակայ քաղաքները ասպատակեցին, աւերեցին, հրով այրեցին: Արամալից չուեցի, (մտեցայ) Զանդի ունիւս³ [իմ արշաւանքը չարունակելով] ինչպէս Նարի ծովը, Ասուրի ճօր զէնքը թաթախեցի ծովի մէջ, զո՛հ մատուցի, շինեցի [իմ թագաւորութեանս պատկերը], Ասուրի, մեծ տիրոջ, իմ տիրոջ փառքը, իմ դիւցազնուութեանց պատմութիւնն եւ իմ շահատակուութիւնները վերան գրեցի⁴:

Այտեղից անցնելով Գիլգան Սաղմանասար յարձակմամբ առնուի եւ խուլուշիաի իշխան Կակիաի Էիլայա ամրոցը եւ գերում 3000 մարդ, մի ապացոյց, որ Կակիան կրկին ասպատակել էր Ասորեստանի թագաւորի դէմ, դաշն կապելով Արամի հետ:

Նոյն արշաւանքի մասին շատ սուղ աւանդում է Ներքովդի սեւ կոթողի ժամանակագիր արձանագրութիւնն, որ նախ յիշում է արեւմտեան արշաւանքի մասին, «վերադարձիս մտայ

Աղձնեաց (Alzi) անցքը. [եւ նուաճեցի] Աշնեիք, Սուխնի, Դայասնի, Նիմե երկրները եւ Արգաշկուսն, ուրարտացի Արամի արքայանիստ քաղաքը, Գիլգան եւ խուլուշիա երկրները¹:

Վերջապէս Բալափատի (Նիմուէից հարաւարեւելք) պալատի գլուխ արձանագրութիւնն հաղորդում է մեզ հետեւեալ մանրամասնութիւնները Արամի եւ Սաղմանասարի 857 թ. տեղի ունեցած արինահեղ ընդհարման մասին՝

«Հանձիթից (Enzit) մինչեւ Դայասնի, Դայասնից մինչեւ [Նիմե, Նիմեից մինչեւ Արգաշկուսն եւ նուաճեցի. Արգաշկուսն, արքայանիստ քաղաք Արամի] ուրարտացու եւ նուաճեցի, քանդեցի, աւերեցի, հրով այրեցի: Մինչդեռ եւ Արգաշկուսն ում էի, Արամ, վստահանալով իւր զօրքի բազմութեան վերայ, գլուխեց իւր բոլոր զորագնդերը. նա իմ դէմ ելաւ, ինձ հետ մարտ եւ ճակատ դնելու համար. ես նորան ջարդեցի, կոտորեցի նորա ռազմիկները, նոցանից 3000 զէնքով գետին տապալեցի. նորա զօրքի արինով հեղեղեցի լայն դաշտը: Ես առայ նորանից նորա ռազմիկ անօթները, նորա արքայական գանձերը, հեծելաձիեր մեծ բազմութեամբ: Իւր կհանքը փրկելու համար նա փախաւ անանց լեռները: Լայնածաւալ քուսէ երկիրը խողովողեցի Ուռա աստուծոյ նման: Արգաշկուից մինչեւ Գիլգան, Գիլգանից մինչեւ խուլուշիա գոգգոռացի իբրեւ հեղեղաբեր Արադ նոցա վերայ, իմ աւերութեանս ցասուցը Ուրարտուի վերայ տարածեցի²:

Լայն ծաւալով ծրագրած երկրորդ արշաւանքը, անցնելով նախ արեւմտեան գաւառների վերայով, իւր գլխաւոր նպատակն ունէր՝ ջախջախել Արամի զօրութիւնը Ուրարտուի սրտի մէջ: Կարելի է կասեցնել, որ Սաղմանասար, Նիմուէից շեղուելով դէպի արեւմուտք, կամէր մի կողմից քնացնել աշաւուրը Արամի ուշագրութիւնն, միւս կողմից՝ ապահովեցնել իւր թիկունքը թշնամի ցեղերի դաւաճանութիւնից ի դէպս, եթէ բազմը Ուրարտացոց ժպտար: Այս տեսակէտից պէտք է մեկնել այն հեռուստ եւ գծարին ճանապարհը, որ մեծ նեղութեամբ անցաւ Ասորեստանի պետը Նիմուէից խաւանի, Ուռ հայի եւ Խարբերդի վերայով՝ Ուրարտու մոզնելու համար: Անցնելով հիսխային Միջագետք եւ նուաճելով ճանապարհին հատեան

¹ Ռամման — քանակական Արագ — հատեան փշուր — ուրարտեան Թէիբսա՝ կոյտակի, փոքրիկ եւ հեղեղ աստուած:

² Mon. Inscr. III Rawl. 7-8.

¹ Annaleninschrift des schwarzen Obel. von Nimrud, Layard, Cuneif. inscript. pl. 87-98.

Տիւրք-Բարսիպ ամրոցը Եփրատի վերայ (այժմ Բիրբինի, խառնից, արեւմուտք), որի իշխան լինելու որդի Ագիբի՝ քանիցս ապստամբած լինելով՝ այժմ փախստեամբ ապրիցեալ յայտնոյս Եփրատի ստոր երկրներ, Սաղմանասար այստեղ ընդունեց Եփրատի վերայ բնակուող եւ Առուրիքի ծովափեայ ցեղերի իշխաններից տուրք (արծաթ, ոսկի, արծիճ, պղինձ, պղնձեայ անոթներ, ձկներ, ոչխարներ, քաթանից գոշնգոյն զգեստներ)։ Ապա անցաւ Սուսու, Բիտ-Ջաման, Նամ-դան եւ Միրիսի գաւառները, պէտք է կարծել՝ Ուռ-Տայի եւ Սեւերեկի վերայով, երբեմն բռնով ճանապարհ բանալով իւր զօրքի եւ կառքերի համար, ձեռքեց Վիրամն-Չիման լեռնաշղթան Ծոփաց երկրում եւ հասնօրէն Հայաստան գողի բարձրութիւններից (ուր կը բռնէ Տիգրիսի սկիւրքներից մէկը)՝ իջաւ, Հանձիթի տափա-րակը։ Այստեղից նա սկսեց իւր անխնայ կոտորածը, սրի եւ հրի մատներով անպաշտպան բնակիչների գիւղերը եւ աւարի առնելով նոցա ինքը եւ գլխը. ապա նա հաճաք գգաց իւր այս գործերը յիշատակել ապագածի վերայ մի ինչ որ հեռուոր Սաւուրի տեղում։ Այժմ միայն Արածանի կը բաժանէր Սաղմանասարին թշնամու երկրից, որ սակայն ըստ երեւութի նորան չէր սպասում. գոնէ նա ՀՅանդիպեցաւ այստեղ՝ ինչպէս Տիգրատպալասար՝ նախնան իշխանների միացեալ ընդդիմագրութեանը. անշուշտ Արամէն յարմարագոյն համարեց կտորուանել իւր ոյժերը իւր բուն երկրում, ուր նորան դուրսէն եր թշնամու զօրութիւնը մաշել։ Եսրբերդի կամ Բալուի մօտ տեղափոխուելով գետի միւս փոքր Սաղմանասար մտաւ Սուսու (Սուսու) երկիրը, որ ըստ իւր աշխարհագրական դիրքի միանգամայն կը համապատասխանէ հայ մատենագրերի Հաշտ Ենի (յուս)՝ ԱՇՏԱՆ-ՆԻՇԻ գաւառին. երկրի մայրաքաղաքը Ուսաշտաւ իւր առամբ եւ նորա իշխան Սուսաի գեւորութեամբ վերջացաւ Սուսուի նուաճումը։ Անցնելով ճապարջուր գէպի արեւելք, ՀՅանասարով Արածանիի փափրից Սաղմանասար՝ իջաւ, Սուսուի կից Դապայենի՝ ըստ ուրարտեան արձանագրութեանց Դիաուս իշխանի երկիրը, որ հասնօրէն կը ձգէր ճապարջուրից գէպի Ցաւոն Բուլանըն մինչեւ Մաննկերտ (Մեղազկերտ)։ Զարմանալի է, որ Ասորեստանի թագաւորը չէ յիշում այս հարուստ երկրի եւ ոչ մի քաղաքի, անգամ նորա տիրոջ անունը, թէեւ ինքը իշխանութիւնը հանդէս է գալիս զեռ Տիգրատպալասարի արշաւանքի ժամանակ իրեն. նախնան

երկրներից հզօրագոյնը։ Սակայն Սաղմանասար Բիւն նա բնաւ չընդդիմագրեց, թէեւ լինելով Արամէի բուն երկրին միանգամայն կից,

Դապայենից նա անմիջապէս յարձակեցաւ Արամէի՝ արքայանիստ, քաղաք Արգաշի ու ի վերայ։ Մեր աղքատ աղբիւրները (ԹՅՄԼ չեն տալիս նոյն իսկ մօտաւորապէս որոշել այս նշանաւոր ուրարտեան քաղաքի դիրքը. անունիս առաջին վանկը որւէ հանդէս է գալիս զանազան աշխարհագրական անուններում, Ար-անիա գետ, Երէւ-ա (Երզնգեան) աւան Եկեղեցի գաւառում (պարսկերէն՝ ԱՇՏԻՍ Անշի-ի փոխ Անշի-իս), Ար-ն (Աղմնեաց գաւառ = յն. 'Apošnavjy) իւր Ար-ու փոխ. Ար-ու քաղաքով, Ար-ն քաղաք (կարնի մօտ)։ Անշուշտ հնումն որւէ մասնակից ունեցել է իւր որոշ դիցարանական նշանակութիւն, որ այժմ մեզ համար կորած է. Ար-ն անունով աստուած յիշուած է ուրարտեան դից շարքում։ Որպէս էլ հրապուրիչ լինի որոնել Արգաշիւն Երիզա աւանում՝ այս քաղաքի հնութեան, աշխարհագրական դիրքի եւ անունի համահնչման հիման վերայ, սակայն պիտի ենթադրութիւնն առ այժմ հաստատ հողի վերայ չի կարող դրուիլ՝ ի նկատի առնելով Երիզայի հեռաւորութիւնը վանայ ծովից, որի շուրջը շարունակ կը պտրտէր Սաղմանասար. բացի այդ, Երիզան նուաճելու համար նա կրկին անգամ պէտք է անցնէր Եփրատը, որի մասին նա սակայն այստեղ չէ յիշում։ Հաւանօրէն Արգաշիւն պտրտու է Բինգոն-դաղից արեւելք, ստորին Բառանի, Արգաշեարի եւ խամուր-դաղի մէջ, արեւելեան Եփրատի թեւերից մէկի վերայ (հետաքրքրական է, որ այս քաղաքի անունով Սաղմանասար այլ տեղ կը գտնուի Արամէի գաւառը, որի ծաւալը դժար է որոշել)։ Տեղի անունի դիրքը՝ հսկայ լեռնաշղթաներով շրջապատած՝ ստիպել է տալիս յիշուի կարծել, որ յիշեալ ժամանակ այստեղ էր Արամէի տէրութեան քաղաքական միջավայրը. սակայն Արգաշիւն պէտք է նորա ժամանակաւոր կամ երկրորդ արքայանիստ քաղաքը համարել, որտեղից նորան դուրսէն եր նախնան իշխաններին իրեն հնազանդեցնել եւ իւր սահմանների վերայ հսկել եւ ուր նա իւր զօրքերը գումարել էր՝ Սաղմանա-

1 Անուն յիշում է Արգաշի, Արգաշիւն եւ Արգաշիւն անունով։ Արամէն անունը որք է, որ ից ուրարտեան սեպհական անունաց -տի վերջնութեան կրճատումն է (համա. Մեհուպէ, Բուսուպէ եւ այլն)։ -իւն, -իւն-անուն անունիս երկրորդ մասը, որի իմաստը պարզ չէ։

սարի ճանապարհը փակելու համար, ըստ երեւուածին նորա յոժերը բաղնացած էին գլխաւորապէս նորա սեպհական գնդերից եւ ապա նախնան հպատակ ցեղերի նուազ վաշտերից, որոց վերայ մեծ յոյս չէր կարելի գնել, գոնէ Սաղմանասար ընաւ չէ յիշում նորա նիւակակիցներին մասին: Այնու ամենայնիւ Երամէն վստահացաւ իւր մի թուռն Ուրարտացիներով չափուիլ գերազանց թշնամու հետ ճակատը տեղի ունեցաւ Արզաշկուի մօտ տափարակում, ուր ասորեստանցոց հեծեղանքովը կարող էր ազատ գործել: Թողնելով պատերազմի դաշտը Երամէ յետ Նահնափն եւ շտապեց ամրանալ իւր մնացեալ զօրքով առանց լեռների մէջ: Այսպէս կ'աւանդէ երկրորդ տեղեկութիւնն. սակայն առաջին խմբագրութիւնն, որ իւր հետեւողութեամբ եւ ընդարձակութեամբ առաւել հաւատ կը ներշնչէ, այլ կերպ կը նկարագրէ այս արեւմահեղ ընդհանրումը. Թշնամին մօտենալիս Երամէն թողեց Արզաշկուն, որ ըստ երեւութիւն քարաբլուրի վերայ տափարակի մէջ էր գտնուում եւ լուրջ ընդդիմադրութեան անընդունակ էր, եւ բարձրացաւ Ագգուրի լեռները, ինչ Բիւզնեօ-դաղի արեւելեան լանջերից մէջը. Սաղմանասար նորան հետամուտ եղաւ եւ այստեղ ճակատեցաւ նորա յետապահ գնդի հետ, մինչդեռ ինքը Երամէն իւր գլխաւոր յոժերի հետ ամրացաւ մի անմատոյց լեռան վերայ, ուր Սաղմանասար չվստացաւ հետեւիլ:

Բալամատի արքունեաց դռան նոյն կուռին վերաբերեալ պատկերագրող նկարագրութիւնն (տե՛ս ստորեւ) ներկայացնում է սակայն Արզաշկուն ասորեստանցիներից պաշարուած եւ հրդեհած, մինչդեռ ուրարտացիք քաղաքի պարիսպների վերայ արիւրար պաշտպանուած են: Հասկանալի է, որ՝ եթէ ճիշտ է նկարիւ բովանդակութիւնը՝ Սաղմանասար միայն ուժգին մարտից յետոյ կարողացաւ տիրել ամրոցին, ուր Երամէն թողել էր մի պահպան գունդը:

Առաջին տեղեկութիւնը թիւլ է տալիս եղբայրացեալ, որ Արզաշկուի ճակատը այն առտինձն օրհասական չէր Երամէի համար, ինչպէս Սաղմանասար իւր փառքի համար կամեցել է աւանդել ապագայ սերնդներին, անշուշտ չափազանցանալով իւր հաղաւորողի կուրուսով (մի տեղ յիշելով 3000, միւս տեղ՝ 3400 սպանուածներ!): Եթէ դաշտում տեղի ունեցած կիւր յիշաւ Սաղմանասարի համար մի փառաւոր յաղթութիւն է, մեզ զարմանալի կը մնայ Երամէի նորա գերութիւնից Երաշտի գեր-

ծանիլը: Երկու խմբագրութեանց անհամաձայնութիւնը ճակատի տեղի վերաբերմամբ դժարացնում է մեզ պարզ պատկերացնել ընդհանրման ամբողջ պատկերը եւ նոյն իսկ կասկած յարուցանում ինչ ինչ մանրամասնութեանց ճշտութեան մասին: Եթէ մենք աւելի հաւատ ընծայենք առաջին, բնորոշ մանրամասնութիւններով հարստագոյն տեղեկութեան, կը ստանանք այն տպաւորութիւնն, որ հմուտ Երամէն զգուշացաւ իւր համետ զինուած լեռնականներով դէմ առ դէմ չափուիլ ուժեղ թշնամու հետ տափարակում եւ՝ թողնելով անպաշտով Արզաշկուն եւ իւր հետ տանելով մեծ պաշար («սայլեր, ձիեր, արջառներ, հորթեր, ինչք, աւար եւ հարուստ գոյք»)՝ ապաստանեցաւ լեռանց խորշերում, մինչդեռ նորա յետապահ գունդը կուռի բռնուեցաւ Սաղմանասարի հետ եւ յետ միջոց նորա յարձակումը զգալի կորստով երկու կողմին համար: Սաղմանասար ստիպեցաւ վերադառնալ Արզաշկուն, բաւականանալով թշնամուց խլած աւարով: Այսկերպ անդիմացաւ Երամէն իւրայիններով ապրիլ Ուրարտուի անվտանգ գաւառներից մէկը, ըստ երեւութիւն կարինի լեռները, որտեղից նա Սաղմանասարի հետանալուց յետոյ իրկին տարածեց իւր իշխանութիւնը իւր լայնածաւալ գաւառների վերայ:

(Էպրոն-Իլի.)

Բ. ՊԱՆՈՒԹԵԱՆՑ



Լ Ե Զ Ո Ւ Ա Ր Ա Ն Ա Կ Ա Ն

ՍՅՈՒԳՈՐԸՆԵԿԱՆ ՀՅՑԱԶՕՑԱՌԹԻՆԸ

(Էպրոն-Իլի.)

23.

1. Հայ. «աւլ (նվ.)»՝ «ստորին կողմ իրաց,» հնդեւր. **ōndh-yo-s-* համապատասխանելով, համեմատուելու է ըստ *inferus* «ստորինը, եւ այլն» (*Walde 301*)-ի հետ. ուր *inf-* **endh-* էն է սկը. *adhamas* «ամենաստորինը», ալ. *adaro* «ստորինը», Հայ. ընդ (**նդ* կամ **անդ*-էն) երեւն *unter* «նշանակութեան մէջ հնդեւր. **endhes-* էն, նոյնպէս մի եւ նոյն է սկը. *adhās* «*unten*», գոթ. *undar*, *unter*»-ի հետ. ուր *Hübschmann*, *Arm. Gr. 1*, 447:

Հաջիւ թէ կարող է իրնդրի ընել իրաւ առանձին ընդհանրութիւն մասին Երամէի հետ՝ տափարակում եւ լեռներում. Սաղմանասար չէր զրոյս պոյ կրկնակի յաղթութեան յիշատակմամբ մի եւ նոյն արձանագրութեան մէջ իւր անուը փառաւորել: